

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ VI ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԸ

Գեղեցիկ ավանդույթ են դարձել ամեն տարի, Հովհաննես Թումանյանի ծննդյան տարեկիցի օրը, ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի և բանաստեղծի թանգարանի Համագործակցությամբ կազմակերպվող Թումանյանական ընթերցումները:

1979 թ. փետրվարի 19-ին, բանաստեղծի ծննդյան 110-ամյակի կապակցությամբ, մայրաքաղաքի գիտական հասարակայնությունը և Թումանյանի արվեստի երկրպագուները հավաքվել էին բանաստեղծի տուն-թանգարանում՝ ներկա լինելու Թումանյանական վեցերորդ ընթերցումներին:

Բացման խոսքով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Հախվերդյանը: Թումանյանի մասին չեմ խոսք ասաց բանաստեղծ Վահագն Դավրյանը:

«Թումանյանն այն բանաստեղծներից է, — ասաց նա, — որոնցից ամեն քաղաքակիրթ ժողովուրդ միայն մեկն է ունենում:

Գալիս է նա, ժառանգում իր ժողովրդի ամբողջ կենսափոխադրությունը, էպոսը, առասպելը, լեգենդը, երգը, հեքիաթը, այն ամենը, ինչ եղել է իրենից առաջ, նրա վրա զնում իր վիթխարի անհատականության կնիքը և դառնում իր ժողովրդի ոգին, դառնում անհասանելի, անկրկնելի, դառնում միակ...

Այդպես են Գյուլեն, Պուշկինը, Բայրոնը, Միցկևիչը, այդպես է Թումանյանը...»:

«Հովհ. Թումանյանը և 1910-ական թվականների գրական բնագաղտությունը» թեմայով զեկուցեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Է. Ջրբաչյանը*:

Բանասիրական գիտությունների դոկտոր Խ. Գյուլնազարյանի զեկուցումը՝ «Տարբերակից միջին բնագիր», տեքստաբանական մի ինքնատիպ հետազոտություն էր՝ նվիրված Թումանյանի բանաստեղծությունների ստեղծագործական պատմությանը: Զեկուցողը նշեց, որ Թումանյանի նախադասությունից բանաստեղծություններից հաճախ ստացվում է այն տպավորությունը, թե, իբր, բանաստեղծն առհասարակ «հեշտ» է գրել, առանց տառապանքի, բայց, որքան էլ դարմանայի թվա, խստապահանջ զեղազետը մեծ հիգ ու չանք է գրել յուրաքանչյուր տողի, յուրաքանչյուր բառի վրա, բնագաղտաբար մտնել իր ստեղծագործություններին, շատ անգամ կրճատելով և դուրս թողնելով ոչ միայն բանաստեղծական տողեր, այլև ամբողջական տներ:

«Անժանճ էջեր Թումանյանի հասարակական գործունեությունից» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Կաբալյանյանը: Հենվելով Թումանյանի անտիպ նամակների վրա՝ զեկուցողը ներկայացրեց մեծ գրողի և հումանիստի կյանքի ու գործի մի քանի անձանոթ դրվագներ:

Ա. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԲՅՈՒՋԱՆԳԻԱՆ»

Գիտական նստաշրջան

Փետրվարի 27—28-ը նրկանում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի կազմակերպած «Կովկասյան մշակութային աշխարհը և Բյուզանդիան» գիտական նստաշրջանը՝ նվիրված վրաց մատենագրության խոշորագույն պատմաբան, արևելագետ, ակադեմիկոս Կ. Ս. Կեկելիձեի ծննդյան 100-ամյակին:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Խ. Սաբաջյանը բացման խոսքում արժեքավորեց ակադ. Կ. Ս. Կեկելիձեի նշանակալի ավանդը հայրենական արևելագիտության ասպարեզում: Վրաստանի և հարևան երկրների միջնադարյան մատենագրություններին բաջատեղյակ և անխոնջ հետազոտողը բազմիցս անդրադարձել է Անդրկովկասի ժողովուրդների պատմամշակութային առնչություններին, շարունակելով և նոր աստիճանի բարձրացնելով Ն. Մառի հիմնադրած հայ-վրացական բանասիրությունը:

«Կ. Ս. Կեկելիձեն և բյուզանդա-վրացական

մատենագրական փոխհարաբերությունների հարցերը» թեմայով զեկուցեց Է. Գ. Խիբրիրիան (Թբիլիսի): Նա բնութագրեց գիտականի կատարած մեծ աշխատանքը միջնադարում հունարենից վրացերեն թարգմանված երկերի ուսումնասիրության և հրատարակման գործում, ինչպես նաև արժեքավորեց երախտավորի ավանդը վրացերենից հունարեն թարգմանված Բարադամի վարքի հետազոտման բնագավառում. «Կ. Ս. Կեկելիձեն իբրև վրաց գրականության խոշորագույն հետազոտող» զեկուցման մեջ Լ. Վ. Մենաբղեն (Թբիլիսի) նշեց, որ չկա վրաց մատենագրության պատմությանը վերաբերող որեէ ինդիր, որին անդրադարձած չլինի Կ. Ս. Կեկելիձեն: Նրա «Վրաց մատենագրության պատմություն» (երկու մեծագիր հատոր) և «Դրվագ-

* Զեկուցումը տպագրվում է մեր հանդեսի այս համարում:

ներ վրաց չին գրականության պատմությունից» (տասներեք հատոր) չինարար աշխատություններում տրված է ավատատիրության ժամանակաշրջանի վրաց չոգեոր և աշխարհիկ գրականության գիտական ուսումնասիրությունը:

Խոսելով V դարի երկրորդ կեսին Սասանյան Պարսկաստանի դեմ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի մասին, ակադեմիկոս Ս. Տ. Երևմյանն իր ղեկուցման մեջ անդրադարձավ 387 թ. Հայաստանի բաժանումից հետո Անդրկովկասում ստեղծված իրադրությանը. Հայաստանում նախարարական տների դերի բարձրացմանը և մանրամասն բնութագրեց V դարի 80-ական թթ. Անդրկովկասի ժողովուրդներին ապստամբության կոչող ազդակները: Նա մասնավորապես ընդգծեց Գուգարաց բղձիսության, Տուրտավի դերը, որտեղ ապրել էին 484 թ. ապստամբության ղեկավար Վահան Մամիկոնյանը և այդ հուզումները նկարագրող պատմիչ Ղազար Փարպեցին:

Կովկասյան մշակութային աշխարհը և Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը՝ ղեկուցման մեջ Պ. Մ. Մուրադյանը քննության առավ Կովկասի ժողովուրդների լեզուների և հեթանոսական չավատալիքների ընձեռած նյութը՝ որպես մշակութային ընդանրությունների պատմության աղբյուր, անդրադարձավ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքին՝ Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում: Նա զարգացրեց այն միտքը, թե պաշտամունքի ընդհանրական ձևավորումը տեղի է ունեցել V դարի երկրորդ կեսից և հարատևել է մինչև X դար: IX դարից սկսած Վրաստանում այն աստիճանաբար իր տեղը զիջել է նունևի (նինո) պաշտամունքին:

Վ. Ն. Յուզբաշյանը (Լենինգրադ) հանդես եկավ «Հայաստան և Բյուզանդիա. մշակութային փոխհարաբերությունների բնույթը» թեմայով: Նշելով այն փաստը, որ բյուզանդական մշակույթը մեծ ազդեցություն է թողել Հայաստանում եկեղեցու, դրի և գրչության, գրականության ստեղծման բնագավառներում, ղեկուցողը միաժամանակ ընդգծեց, որ փոքր չէ նաև Հայաստանի և Կովկասի մյուս ժողովուրդների ավանդը բյուզանդական քաղաքակրթության զարգացման գործում: Հայաստանի և բրիտանյա արևելքի երկրների մշակութային և գրական փոխհարաբերություններին էին նվիրված նաև Ա. Վ. Պայկովայի, Ի. Ն. Մեչչերսկայայի և Ա. Լ. Խոսրոնի ղեկուցումները (բոլորն էլ Լենինգրադից):

Ն. Դ. Դոգուանեն (Թբիլիսի) «Վրացական թարգմանական մետափրասյան ժողովածուների

կազմի հարցի շուրջը» ղեկուցման մեջ անդրադարձավ Սիմեոն Լոգոթետի (Մետափրաստ) և նրա հետևորդ Հովհան Քսենոփիլոսի մատենագրական գործունեությանը, Կ. Ս. Մուրադյանի «Գրիգոր Եղիանդացու «Դամբանականի» նշանակությունը հայ չին գրականության սկզբնավորման գործում» ղեկուցման մեջ բնագրական ու կառուցվածքային զուգահեռներ անցկացնելով Կորյունի «Վարք Մաշտոցի» և Նազիանդացու «Դամբանականի» միջև, ցույց տրվեց, որ Կորյունը ձեռքի սակ ունեցել է «Դամբանականի» չայերեն թարգմանությունը:

Միջնադարյան մշակութային կենտրոնների հարցը ևս նստաշրջանի ընդգրկած թեմաների շրջանակից դուրս չէր մնացել: «Աթոսի մանրանկարչական դպրոցը X—XI դարերում» ղեկուցման մեջ ձեռագրագիտական-արվեստաբանական խնդիրներ շոշափեց Ն. Մ. Մանավադյանին (Թբիլիսի): Նա ընդգծեց այդ դպրոցի դերը վրաց գրչության պատմության մեջ և փաստարկեց նրա ազդեցությունը վրաց մանրանկարչության մյուս կենտրոնների վրա (Կոստանդնուպոլիս, Սև լեռ և այլն): Պ. Ա. Չոբանյանը «Տիմոթեոս Գաբաշվիլու մի տեղեկության աղբյուրների և մեկնարանության շուրջ» ղեկուցումով հերքեց մասնագիտական գրականության մեջ ընդունված այն կարծիքը, թե Նրուսաղեմի Ս. Հակոբի վանքը կառուցվել է վրաց Գիորգի առաջին կամ երկրորդ թագավորի օրոք, Աղբյուրագիտական հանգամանալից քննությամբ նա ցույց տվեց, որ այնտեղ գոյություն է ունեցել մի այլ նույնանուն եկեղեցի, որին և վերաբերում է XVIII դարի նշանավոր ճանապարհորդ Տ. Գաբաշվիլու հաղորդումը: Այդ եկեղեցին կառուցվել է Գիորգի Հաշյի իշխանության տարիներին: Կառուցողների և վանական կենտրոնների նույնանունությունը առիթ է տվել շփոթի ու սխալ մեկնարանությունների:

«Ոմն Շաղինի» անձնավորության և գործունեության շուրջ» ղեկուցումով հանդես եկավ Հ. Կ. Մաբադյանը: Գրամագետ Խ. Ա. Մուշեղյանի ղեկուցումը նվիրված էր XI դարում Հայաստանում տարածված դրամների ժամանակագրության հարցերին:

Երկօրյա դիտական նստաշրջանի աշխատանքներն ամփոփեց Արևելագիտության ինստիտուտի կովկասագիտության և բյուզանդագիտության բաժնի վարիչ Պ. Մ. Մուրադյանը:

Ա. Ա. ԲՈՉՈՅԱՆ,

Կ. Դ. ԱՎԵՏԻԱՆ